ՏԱՃԿԱՀԱՅՔ

Սուրհանդակի մէջ հրատարակուած է Թիւրքիոյ Հայոց դաւառական ուսումնարանների բաւական ընդարձակ մի վիճակագրոյց։ Այդ վիճակագրոյցի համեմատ, Թիւրքիոյ 61 դաւառների մէջ կան 818 վարժարաններ, որոնց համար ամսական 362,967 ղշ. ծախք է լինում, և այդքան վարժարանների մէջ կան 60315 աշակերտ և 22380 աշակերտուհի, 1597 ուսուցիչ և 556 ուսուցչուհի։

— Կ. Պոլսի Թաղային վարժարանաց 1903 թուի յունուարի 1-ին հրատարակուած վիճակագրոյցի համեմատ, Պոլսում կան 40 վարժարան, որոնց մէջ—5419 աշակերտներ երկու սեռից, 305 ուսուցիչ և ուսուցչուհի և ամսական լինում է 82865 ղշ. ծախք։ Այս վիճակագրութիւնից դուրս են մնում պետական և այլ մասնաւոր վարժարաններ գնացող աշակերտները և աշակերտուհիները. այդպիսիների թիւը հասնում է 1783-ի։

— «Ծաղկազարդի երեկոյին Դռնաբացէքի արարողութենէն վերջը Երուսաղէմի մէջ մեծ հանդէսով կատարուեր է գանձատան բանալիներուն նորընտիր լուսարարապետ Տ. Գաբրիէլ ծ. վ.-ի յանձման և ուխտագրութեան արարողութիւնը։ Գաբրիէլ ծ. վ. Գլխագրի մատուռէն 20 վայրկենի չափ բանախօսութիւն մը ըրեր և մասնաւորապէս խոստացեր է, թէ պիտի աշխատի հոկել կէտ առ կէտ գործադրութեան միաբանական կանոնագրին։ Յետոյ իր հաւատարմական ուխտը ընելով, բանալիները առեր է ս. Գլխագրէն։ Այս տեղեկութիւնները հաղորդողները կըսեն թէ՝ Գաբրիէլ վ.-ի նկատմամբ աննպաստ խօսողները այսօր ամենէն աւելի կը դրուատեն իր աշխատութիւնը և կարողութիւնը։

— Տ. Սահակ ս. Կաթուղիկոսը իր Աթոռը հասնելով, տեսաւ վանքին թափուր և ամայի վիճակը, և մէկ քանի օր վերջը անմիջապէս սկսաւ ձեռնարկութեանց։ Կրօնական և քաղաքական ժողով գումարելով, հասկցաւ վանքին եկեմուտքը։ Նորին Սրբազնութեան Սիս ժամանումէն ի վեր ամէն օր անպակաս են այցելուներ։ Ինչպէս Երուսաղէմի մէջ, հոս ալ իր գործունէութեան առաջին նշանները ցուցնելով, սկսաւ նորոգել տալ վանքին վիլիլած մասերը, և բազում տարիներէ ի վեր ցեցերու կեր դանձարանին մէջ գտնուած ձեռագիր և տպա-

գիր գրքերը շատ մը թանկագին շուրջառները, պատուական զգեստները, և ոսկեղէն անօթները քննեց, ճշտեց և արձանագրել տուաւ, զանոնք պահելու և ապագային եկեղեցին բարեզարդելու համար: Համայն կիլիկեցիք, միաբանութիւնը և կրօնականք մեծ համակրութիւն ունին Ս. Կաթուղիկոսին հանդէպ, որ իր Աթոռը բաղմելէն ի վեր գրեթէ վայրկեան մը պարապ ժամանակ անցուցած չէ: Օր ըստ օրէ վանքին և վարժարանին վիճակը բարեկարգուելու և բարեփոխուելու վրայ է: Կանոնաւորել սկսաւ եկեղեցւոյ մէջ թէ՛ երգեցողութիւնները և թէ եկեղեցական արարողութիւնները, որոնք մինչև հիմայ անկանոն և խառն ի խուռն ընթացքի մէջ էին: Նոյնպէս բարեջան և գործունեայ մատակարարներ և ուրիշ պաշտօնեաներ կարգեց, իւրաքանչիւր վարդապետին մէյմէկ յատուկ պաշտօններ յատկացուց: Մինչև ցարդ ո՛չ հաշիւ կար, ո՛չ մատակարար. վանքին բոլոր ստացուածքը մէկ քանի անարժաններու և անհաւատարիմներու ձեռքը մնացած էր, ամէն հասնող գործի կխառնուէր: Վերջապէս նորընտիր Ս. Կաթուղիկոսը վանքին վրայ բարերար ազդեցութիւն մը ունեցաւ:

— Սոյն վանքին Դլան ագարակը մահլիլ նկատուելով, օրինական ճամբով աճուրդի հանուած էր տեղւոյն Մահլիլլաթի վարչութեան կողմէ: Միւս կողմէ, սակայն, պետական պաշտօնագրեր ներկայացուեցան, ապացուցանող թէ այս մեծ ստացուածք հանգուցեալ կաթուղիկոսին իր անձնական գոյքը չէր, այլ վանքին երկարժամանակեայ սեփականութիւնն է: Հետևապէս, մինչև որ այս պաշտօնագրերը քննուին և խնդիրը վերջնապէս որոշուի, աճուրդն առժամապէս դադրեցնելու համար պէտք եղած տեղերն հեռագրաւ հրաման ղրկուած է, և Ս. Պատրիարքը Հայրն ալ իրողութիւնն հեռագրած է Կիլիկիոյ Ս. Կաթուղիկոսին:

— Երկու հազար ոսկիի կտակ մը ազգ. հիւանդանոցին.— Բարեսէր տիկին մը հազար ոսկիի հնչուն դրամ և հազար ոսկի արժողութեամբ երկու քարաշէն տուն Բերայի մէջ կտակած է Ազգ. հիւանդանոցին, պայման դնելով որ դաղտնի մնայ իր անունը: Այս մասին պաշտօնական ձևակերպութիւնները կատարուեցան շաբաթ օր: Սոյն բարեսէր տիկնոջ առանց անձնական վիճաբանի ըրած այս կտակը գնահատութեան և շնորհակալութեան արժանի է: